

895.6

3w-39




1703m
895.6

3m 39
am

- 6 NOV 2011

ԵԱՊՕՆԱԿԱՆ ՀԵՔԻՍԹՆԵՐ

I. Չկնորս ուրաշիման.—II. Մի սպանանիբ.—
—III. Պարսեր սարով՝ մեղիբ լարով.—IV.
Անառիկ ամբոց.—V. Երչանկուրթեան նար:



1009
5495

Handwritten notes in blue ink, including a large '4' and other illegible characters.

Թարգմանեց

ԳՐԻԳՈՐ ՇԱՀՐՈՒԳԱՂԵԱՆ

Նախկին ուսուցիչ Ներսիսեան դպրոցի



1910

Տպարան «Հերմէս», Մաղաթեան փող. № 5.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

09.07.2013
POS NOV 8-

ԲԳ.382

ԻՐԻ ՅԱՐԳԵԼԻ ԲԱՐԵՎԱՄ

Պ. Յակոբ Յարուքիւնեան

Բաւեւնցեալի

Նուր քարգմանչից



I. ՁԿՆՈՐՍ ՈՒՐԱՇԻՄԱՆ

Մեզնից շատ առաջ եապօնական ծովի Միդձունսօէ փոքրիկ կղզու վրայ ապրում էր մի խեղճ ձկնորս իւր կնոջ ու միակ զաւակ Ուրաշիմայի հետ: Խըղճուկ խրճիթը ծովի ափին, մակոյկն ու ձկնորսական գործիները՝ կազմում էին նրա բոլոր հարստութիւնը: Երբ փոթորիկ էր լինում և անկարելի ծովը դուրս գալ, մեր ձկնորսը դառն կարօտութիւն էր քաշում ու երբեմն ուտելու բան անգամ չէր գտնում:

Եթէ նոյն իսկ խրճիթը լուսաւորելու համար լամպարի ձէթ անգամ չէին ճարում, բայց և այնպէս ծովային աստծու՝ Կայրիու-իինի պատկերի առաջի կանթեղը երբէք չէր մարում և թէկուզ էլ տան

օջախի վերջին կտոր ածուխն արդէն մոխիր էր դառած լինում, բայց և այնպէս նրանց օջախի աստծու սեղանի առաջ միշտ ծխում էր կնդրուկը: Կարիքն՝ ու նեղութիւնը ամենևին չէին նուազեցնում ձկնորսի բարեպաշտութիւնը:

Երբ նա արդէն այնքան ծերացաւ, որ այլ ևս անկարող էր իւր դժուար արհեստով ապրել, ընտանիքի յոյսն ու ապաւէնը դարձաւ նրա պատանի որդին Ուրաշիման: Եւ երկինքն էլ օրհնեց բարեպաշտ զաւակի աշխատանքը: Նրա ուսկանն էին ընկնում ամենընտիր խոշոր ձկներ ու նրա մակոյկը միշտ վերադառնում էր նաւահանգիստ ծանր բեռնով:

Բայց ահա մի անգամ, աշնան վերջին պատանի ձկնորսը սարսափելի փոթորկի բռնուեցաւ: Երեք օր, երեք գիշեր հակառակ քամին նրան ափից հեռու ու հեռու էր քշում և կատաղի փոթորիկը սպառնում էր ընկըղմել նրա մակոյկը: Ուրաշիմայի՝ ալիք-

ների դէմ մաքառելու բոլոր ջանքերն ի զուր անցան: Միայն մի յոյս էր մնում՝ — օգնութիւն ի վերուստ: Ուրաշիման ծունկ խոնարհեց մակոյկի հէնց այնտեղը, սւր տեղաւորուած էր Կայրիու-իին — ծովի իշխանի արձանը և ջերմ աղօթքներ վեր առաքեց դէպի նա, օգնութիւն խնդրելով և ապա՝ — յոգնած, ուժասպառ՝ պառկեց հանգստանալու ու քնեց խորը քնով:

Երբ նա զարթնեց՝ լուսինը ցոլանում էր հանդարտ ծովում, աստղերը խաղաղ պսպղում էին անամպ երկնքում, սւր մեղմիկ փայլով սահում էր «երկնային գետը» *): Ո՛չ մի գեփիւռ չէր շարժում հանդարտ օդում, ո՛չ մի շշուկ գիշերուան անդորրութեան մէջ: Դանդաղ սահում էր մակոյկը՝ հնազանդուելով հասանքին: Ծփող ալիքը, զարնուելով մակոյկի բթին, խորտակւում էր արծաթափայլ ցայտումներով ու տարածւում

*) Այդպէս են անուանում եապօնացիք „Ծիր կաթինը“:

Թեթև արծաթագօծ օղակներով ու արծաթափայլ հովհարի պէս սաւառնում, և ընդ ընկնում էր մակոյկի ստուերը, ջուրը շողշողում էր գունատ փայլով: Ուրաշիման ոտքի ելաւ, ու դարձնելով դէմքը դէպի իւր հայրական օջախի վրայ փայլփլոզ աստղը՝ երիցս ծունկ խոնարհեց ու փառաբանեց աստուածներին իրան պարզեւած փրկութեան համար:

Ապա երբ նա իւր շուրջը նայեց, տեսաւ, որ դէպի իւր մակոյկը լողում է մի կրիայ, իսկ կրիայի մէջքին կանգնած է մի շքնաղ օրիորդ: Մօտենալով նրան, գեղեցկուհին ասաց՝

—Ես յաւերժահարս Մէն-Նինն եմ, Բիշի ոգիների արքայի գուստրը. հայրենիքս՝—մշտադալար կղզին է, ընդ գեղեցկութիւնն ու ջահելութիւնը երբէք չեն թառամում: Եթէ դու կ'երգուես սիրելինձ անդաւաճան սիրով ու հաւատարիմ լինել, ես կ'ինդ կը դառնամ և յաւիտենական երջանկութիւնը կը լինի քո բաժինը:

Հիասթափուած, սրտատրոփ նայում էր պատանին այս հրաշալի երեւոյթին՝ իսկ երբ լսեց գեղեցկուհու խօսքերը՝ զգաց, որ արդէն սիրում է նրան իւր ոգու բոլոր զօրութեամբ:

Նա մոռացաւ և՛ ծնողներ, և՛ հայրենիք, որոնց մինչև օրս պատկանում էին նրա բոլոր մտածմունքները, բոլոր աշխարհը չքացաւ նրա համար: Նա տեսնում էր միայն հրաշալի յաւերժահարսին, ուստի և երգուեց սիրել նրան մինչև մահ: Ուստի հետևելով իւր սիրեցեալի հրաւերին, նստեց կրիայի մէջքին և կրիան թուցրեց սիրելիներին փոթորկից էլ ուժգին: Մէն-Նինը խնդրեց նրան փակել աչքերը և չը բանալ, մինչև որ ինքը չասի նրան:

* *
*

Աչքը բանալով, նա տեսաւ իւր առաջ կապուտակ ծովում գտնուող մրշտադալար կղզին: Արևի ճառագայթները

փայլում էին, թարմ մեղմիկ զեփիւոր
մատուցանում էր նրանց ծաղիկների ա-
նուշ բուրմունքը: Իսկ այնտեղ, կրղ-
զու վրայ երևում էին ծառերը ոսկե
պտուղներով և բուրաստանները՝ երվնե-
րանգ ծաղիկներով:

Մէն-Նինն առաւ Ուրաշիմայի ձեռքը
և տարաւ այն պալատը, որի հոյակա-
պութիւնն ու փառահեղութիւնը մարդ-
կային ոչ մի լեզու նկարագրել չի կա-
րող: Գեղեցկուհին խնդրեց նրան սպա-
սել գաւթի դաւնը, իսկ ինքն անհետա-
ցաւ կողքի փոքրիկ դռնակով:

Իսկոյն մօտեցան եօթը գեղատեսիլ
մանուկներ սրծաթադօծ հանդերձներով,
կուրծքը զարդարուած փայլուն աստղե-
րով: Նրանք շքապատեցին Ուրաշիմային
և իրար հետ այսպէս էին խօսում՝

—Տես, տես, ահա՛ արքայազնուհի
Րի-շի փեսացուն *):

*) Րի-շի՝—ուզիներ, որոնք բնակուած են յաւիտե-
նական ջահիլութեան երազական աշխարհում:

Մի քանի ըոպէից յետ դարձեալ
դուրս եկան եօթը մանուկներ, նոյնպէս
փառահեղ հագնուած և կրկնեցին նոյն
խօսքերը:

Մին էլ աեսնես բացուեցան պալատի
աւագ-դռները և Մէն-Նինն երեւցաւ: Նա
տարաւ իւր հետ Ուրաշիմային պալատի
մայր-գահլիճը, ուր սպասում էր նրան
ինքը՝ Րի-շի արքան: Վերջինս սիրով ող-
ջունեց նրան և երբ Մէն-Նինն յայտնեց
թագաւորին, որ Ուրաշիման է իւր սրտի
սիրած ու ընտրած փեսացուն, նորից
ստիպեց նրան կրկնելու իւր տուած սի-
րոյ ու հաւատարմութեան երգումը:

Թանկագին քարերով ու մարգարիտ-
ներով զարդարուած շքեղ գահլիճում ներ-
կայ էին բոլոր պալատականները, նրանց
հրաշալի հանդերձները կարծես թէ հիւ-
սուած լինէին արևի ճառագայթներից:
Ուրաշիման երբէք, նոյն իսկ երազում
անգամ այդպիսի բան չէր տեսել:

Նա մինչև անգամ չէր էլ կարող ա-

սել թէ արդեօք իրան շրջապատող արա-
րածները նման են սփորական մարդոց:
Նրանց արտակարգ շքնաղուծիւնն ու
շրջապատող բոլոր առարկաների հրաշալի
փառահեղուծիւնը բոլորովին կուրացրին
նրան և պղտորեցին նրա բանականու-
ծիւնը: Նա կախարդական աշխարհումն
էր և երջանիկ՝ հրապուրուած իւր կնոջ
սիրով ու շրջապատող շքեղութեամբ, չէր
նկատում, թէ ինչպէս է սահում ժամա-
նակը. նա իսպառ մոռացել էր իւր ծնող-
ներին, հայրենիքն ու առաջուան կեանքը:

* *
*

Այդպիսով անցել էր, գոնէ նա այդ-
պէս էր կարծում, երեք տարի: Բայց
այդ ժամանակն անցնելուց յետոյ, եր-
բեմն նրան տիրում էր մի անորոշ թա-
խիծ և նա տխրում էր, թէ և ինքն էլ
չէր հասկանում տխրութեան պատճա-
ռը: Սակայն, փոքր առ փոքր, նրա երե-
ւակայութեանը հանդիսանում էին ինչ

որ անորոշ, մշուշապատ դէմքեր, որոնք
հետզհետէ պարզուելով, ներկայացնում
էին վաղեմի, այժմս մոռացուած պատ-
կերներ: Նա տեսնում էր իր առաջ ծնող-
ներին, որոնց տարիներն արդէն ծերաց-
րել էին՝ ծովափին աչքը թաց սպասե-
լով նրա վերադարձին. երբեմն տեսնում էր
նրանց՝ նստած մենակ ընտանեկան յար-
կի տակ իրենց կորուստը ողբալիս. տես-
նում էր նրանց անօգնական ու հացի
կարօտ—ուրիշի ողորմութեամբ կերա-
կրուելիս, մինչդեռ ինքը մինչև որկորը
լի էր լիութեամբ ու փառքով: Եւ տա-
րածամ գղջումը ներս սողաց նրա սիր-
տը: Երջանկութեան արևի ճառագայթն
անհետացաւ նրա դէմքից, արցունքը
մռայլեց նրա հայեացքը և ծանր հառաչը
րոպէ առ րոպէ դուրս էր վխտում նրա
կրծքից:

Ուրաշիմայի տխրութիւնը չէր կա-
րող թագնուիլ սիրող Սէն-Նինիի սրա-
տես աչերից: Ուստի սաստիկ զարմացած,

որովհետև նրա հօր թագաւորութեան մէջ բոլորովին յայտնի չէր թէ ինչ է ցաւն ու հոգսը, նա հարցրեց նրան, թէ ինչն է այդպէս մռայել նրա ճակատը:

Փոքր ինչ տատանուելուց յետոյ, Ուրաշիման խօսեց՝

«Ասում են, որ մարդու թոյլ սիրտը կապուած է իւր հայրենիքի հետ անխզելի կապերով, որ նոյն իսկ ազուէսն անգամ շունչը տալիս դարձնում է իւր մարդ հայեացքը դէպի լեռնային ծերպերը, ուր նա առաջին անգամ աշխարհ եկաւ:

«Եւ այժմ ես ինքս էլ համոզոււմ եմ, որ այդ բոլորովին ճշմարիտ է: Ես կարծում եմ, որ արդէն բաւական ժամանակ է անցել այն օրից, ինչ ես թողել իմ ծնողներիս և այժմ յիշելով նրանց, տիրել է ինձ մի անասելի թախիծ: Ո՛հ, թո՛յլ տուր ինձ, սիրելի՛ս, զոնէ կարճ միջոցով այցելել ծնողներիս, տեսնել հայրենիքս»:

Մէն-Նինն յուզուեցաւ նրա աղաչան-

քը լսելով ու արցունքն, որ ցարդ անյայտ էր նրան, ցոլաց նրա աչերում:

— Ի՛մ սէրս դէպի քեզ անփոխարինելի է, սլատասխանեց նա,— և ես մի միայն մի ցանկութիւն ունիմ՝ յաւիտեանս քեզ հետ լինելու, սիրելի Ուրաշիմա, մինչև աշխարհի վերջը:

— Միայն թէ քո մտքերն, Ուրաշիմա, խորշում են ինձնից և սաւառնում դէպի քո նախկին հայրենիքը: Քեզ համար ցաւալի է, որ դու չես բնակոււմ այնտեղ, բայց որ դու ինձ պէտք է մենակ թողնես ու հեռանաս, դու ամենևին չես ավստուսւմ: Է՛հ, ինչ արած, դու այլ կերպ չես կարող վարուիլ, այդ է պահանջում հայրենիքի կարօտը, ապա ուրեմն, հեռացիր այստեղից:

Խօրը հառաչելով թողին նրանք պալատը և իրար ձեռք բռնած, գնացին դէպի ծովեզրը: Այստեղ նրանք սրտաշարժ հրաժեշտ տուին իրար: Ուրաշիման խոստացաւ շուտով վերադառնալ և Մէն-

Նինը տուեց նրան մի փոքրիկ արկղիկ,
ասելով՝

—Ա՛ռ այս արկղիկը սիրելիս, և եր-
բէք չ'անջատուես նրանից: Բայց երգուեց-
նում եմ քեզ, — եթէ դու իրաւ ուզում
ես վերադառնալ ինձ մօտ, մեր մշտադա-
լար կղզին, երբէք չը բանաս այդ արկղիկը:

Ապա աղջիկը նստեցրեց նրան կրի-
այի մէջքին, որը մի ժամանակ բերել
էր դրանց ծովափը, հրամայեց նրան
փակել աչքերը, երեսը մեղմիկ շոյեց
ձեռքով և Ուրաշիման մի ակնթարթում
խորը քնով քնեց:

* * *

Երբ նա զարթնեց, տեսաւ իւր առաջ
իւր հին մակոյկը, որ տատանում էր
ալիքների վրայ: Նա ուրախութեամբ
նստեց մակոյկը, իսկ կրիան սուզուեց
ծովի խորը: Քամին բարեպատեն էր և
շուտով հասցրեց նրան հայրենի ծոցը,
նր նա, լի, ուրախ ու զուարթ յոյսերով
չտապեց նետուել ծովեզրը:

Բայց քրքան մեծ էր նրա զարմանքը,
լի՛նչպէս փոխուել էր ամեն բան:

Ո՛չ մի բան չէր յիշեցնում նրան այն
ժամանակը, երբ վերջին անգամ թողել
էր կղզին: Թէև սարերն իրենց տեղն
էին կանգնած, միայն դարևոր կուսական
անտառներն անհետացել էին և նրանց
փոխարէն բուսել էին ծանծաղ մացառ-
ներն ու սփռում հերկած դաշտերը:
Իսկ այնտեղ, ո՛ր առաջ ծածանում էին
տրտերը, այժմ բարձրանում էին մամ-
ուապատ հսկայ մայրիքը: Ի գո՛ւր էր
փնտռում նա հայրական խրճիթը: Չէր
երեւում նոյնպէս և հարևան ձկնորսների
գիւղը: Ծովափին շարուել էին հոյակապ
շինութիւններ, և նրա աչքին հրապրեց
մի ինչ որ անձանիօժ արարողութիւն:
—Երե՛ք տարուայ տարուայ ժամանակ-
երբ տարուայ արտելալով ծովի աղեկ-
տուր մտածում էր Ուրաշիման, և լի՛նչ-
պէս ամեն լի՛նչ փոխուել է:

Իսկ ծնողները, որոնց նա արդէն

1001
5495



Թողել էր ծեր հասակում: Այժմ նա գրեթէ յոյս չունէր նրանց կենդանի տեսնելու: Հէնց այնտեղը, ուր առաջ կանգնած էր խղճուկ բամբուկի խրճիթը, ուր նա ծնուել էր, ուր նա անցուցել էր իւր պատանեկան ամենալաւ տարիները, այժմ բնակուում էին օտար մարդիկ: Եւ միայն օտար դէմքեր էին հանդիպում նրան ճանապարհին: Նա ոչ ոքի չէր ճանաչում և ոչ ոք էլ, ըստ երևութին, չէր ճանաչում նրան: Մի միայն հետաքրքիր և անվստահ — դարմացական հայեացքներ էին ուղղում նրան: Վերջապէս նա սիրտ առաւ և հարցրեց մի շատ ալեղարով ծերունու իւր ծնողների մասին:

Ալևորը զարմանքով պատասխանեց՝

—Ո՞րտեղացի ես դու, օտարական, որ հարց ու փորձ ես անում այնպիսի մարդոց մասին, որոնք այնքան հեռաւոր ժամանակներումն էին ապրում: Բայց կաց — այդ անունները կարծես ինձ քիչ ծանօթս գալիս ես: Այո՛, այո՛, թէ և յիշո-

ղութիւնս ինձ այժմ չուտ չուտ է դաւաճանում, բայց լաւ միտս է գալիս, որ դեռ երեխայ ժամանակս շատ անգամ եմ լսել, թէ ինչպէս շատ վաղուց, հին ժամանակ, պատանի ձկնորս Ուրաշիման մի անգամ ծովն է գնացել և այլ ևս չէ վերադարձել տուն: Նա խեղդուել է փոթորկի ժամանակ, իսկ ծնողները չը կարողանալով տանել իրենց սիրելի մին ու ճար որդու դառն կորուստը, կսկծից շուտով վախճանուել են: Այդ օրից անցել է արդէն երեք հարիւր տարի: Դու ինքդ կարող ես համոզուիլ այդ բանում, կարդալով հասարակաց գերեզմանատանը նրանց տապանագիրը:

Յուսաբեկ այդ սարսափելի բօթից, խելքը կորցրած՝ Ուրաշիման խարխաբելով հազիւ հազ քայլերն ուղղեց դէպի հանգստարանը, ուր հանգչում էին նրա նախնեաց նշխարները: Այս սրբազան վայրը միակն էր գերծ մնացել ժամանակի կործանիչ ազդեցութիւնից, որով-

հետև եապօճնացիք սրբութեամբ են պաշտում իրենց հանգուցեալների դամբարանները և նոյն իսկ անձանօթ հանգուցեալների շիրիմներն անգամ դարդարում են ծաղիկներով:

Հեկեկալով ընկաւ դժբախտը տապա-նաքարին, ուր դրօշմուած էին իւր սրբտին թանկագին անունները: Նա զեւ կասկածում էր, բայց այժմ այն բոլորը, ինչ նա առաջ կարծում էր անհաւատալի, արդէն դառն ճշմարտութիւն էր: Նրան տիրեց թախիժը: Ամէն ինչ, ամենը կորաւ: Ամէն ինչ անհետացաւ: Բայց մի՞թէ նա միայնակ այսքան սերունդներից աւելի ապրեց:

Յանկարծ նա մտաբերեց Սէն-Նինիից ստացած արկղիկը և մխիթարելով իրան կեղծ երազներով, գոչեց՝

—Ո՛հ, եթէ ես կարողանայի գտնել այստեղ մի հնար շար ոգիները վանելու, վերանորոգելու այն ամենը, ինչ որ հինն է, անհետացած՝ իմ ծննդավայր գիւղը,

մեր հին խրճիթը ու յարութիւն տալու թանկագին ծնողներիս»:

Եւ մտանալով յաւերժահարսի նախազգուշութիւնը, նա կամացուկ բարձրացրեց արկղիկի խուփը: Հէնց այդ բոպէին այդտեղից բարձրացաւ մի թեթեւ արծաթափայլ ամպ և տահեց զէպի մըշտազալար կղզին:

Ուրաշիմային յանկարծ պատեց մահացու սարսուռ. նրա մագերը ալեօրեցան, աչքերը մարեցան, ատամները վայր թափուեցան, խորունկ կնճիռները ակօսեցին դէմքը: Նրա մարմինը կծկուեցաւ, ձեռն ու ոտը դողում էին, շնչաւութիւնը հետզհետէ թուլանում էր: Ընտով սիրտն սկսեց բաբախել և նա տատանուելով, անշնչացած փարուեցաւ ծնողների շիրմովը:

Արկղում գտնուում էր կենսատու դեղ ու դարմանը, որը նրա տիրոջին յաւիտենական ջահիլութիւն էր պարգևում:

Եւ մինչև այսօր էլ Քանազավա քաղաքի տաճարներից մէկում, (որ գտնւում է Իէդոս ծովածոցի մօտ, կէս ժամ հեռու Իօկազամայից դէպի հիւսիս) ցոյց են տալիս Ուրաշիմայի շիրիմը, նրա ուղանք, յաւերժահարսի ընծայած արկղիկը և երկու թանկագին քարեր, որ բերել էր նա մշտադալար կղզուց:

Եւ ինքն, Ուրաշիման, Եապօնիայի ձկնորսական շատ զիւղերում պաշտում է ինչպէս տեղական առաքինի աստուածութիւն, որովհետև նա նոյն իսկ մշտադալար կղզու վրայ անցուցած կեանքի վայելքների ժամանակն էլ չը մոռացաւ իւր թշուառ ծնողներին ու իւր սիրելի հայրենիքը:



II. ՄԻ՛ ՍՊԱՆԱՆԵՐ:

Շատ տարիներ առաջ, Ինարէ գաւառում, եապօնական ծովի մօտ ապրում էր մի մարդ, Օկադա անունով: Այս նրա ծննդավայրը չէր: Նա ազնուական էր, երբեմն մեծ հարստութեան տէր, բայց այն ժամանակ պատահած խռովութիւնների ու ներքին խառնակութիւնների շնորհիւ, զրկուեցաւ իւր հարստութեան մեծ մասից և ստիպուեցաւ գաղթել օտար երկիր:

Օկադայի կինը մեռաւ դեռ ևս հին ծննդավայրում, բայց նրա օջախի ճրագը դարձեալ չը հանգաւ: Նրա երկու զուտորները, համեստ և գեղեցիկ օրիորդներ, կառավարում էին նրա տունը և միայն մի հոգս ունէին՝ այն է՝ սրբան կարելի է ամօրել իրենց սիրելի հօր կեանքը:

Նրանց բոլոր հոգսը միայն նա էր և ամէն մէկը նրանցից աշխատում էր գերազանցել միւսին իւր անձնուէր հոգացողութեամբ ու խնամքով՝ սիրելի հօր բարօրութեան համար:

Բայց որքան էլ սիրում ու զգուում էին զուստրներն իրենց հօրը, Օկազան քիչ էր նստում տանը: Սաստիկ սիրելով որսորդութիւնը, նա երբեմն ամբողջ օրերով հրացանն ուսին թափառում էր շրջակայ անտառներն ու ճահիճները որս գտնելու համար, մոռանալով Բուզգայի պատուէրը՝ «Մ ի ս պ ա ն ա ն եր»: Այս բանը շատ էր վշտացնում խեղճ օրիորդներին: Բաւական դառն արցունքներ էին թափում նրանք, երկիւղ կրելով իրենց հօր հոգու փրկութեան համար և չէին դադարում աղերսել նրան ձեռք վերցնելու այդ մեղսալիւր զբաղմունքից: Վերջապէս նրանք կարողացան մեղմացնել նրա սիրտը և նա խոստացաւ հրաժարուել որսորդութիւնից:

Մի քանի օր, իրան, Օկազան սրտապրնդում էր և մնում էր տանը—անձնուէր զուստրները չը գիտէին, թէ ինչպէս արտայայտեն իրանց ուրախութիւնն ու երախտագիտութիւնը: Բայց Օկազայի բարի գիտաւորութիւնները շատ անհիմն էին: Մի աւաւօտ նրան այցելեց նրա մի հարեանը, նոյնպէս որսի սիրահար մի անձն, ինչպէս որ մեր Օկազան էր և յայտնեց, որ ծովափին, ճահիճների մօտ երևացել են երկու սպիտակ արագիլ: Այս համբաւն առնելով, Օկազայի որսորդական սիրտն այլ ևս չը համբերեց, փորձանքը սաստիկ մեծ էր և նա որոշեց մի անգամ էլ զուարճանալու որսորդութեամբ: Բայց որպէս զի չը վշտացնէր զուստրներին և ազատուէր նրանց աղերսանքներից, նա խնդրեց հարևանին գաղտնի պահել իրանց այդ գիտաւորութիւնը:

Վասկածի ոչ մի տեղիք չը տալու համար, նա այդ օրը քնեց սովորական ժամին: Բայց երբ, իւր կարծիքով, օրի-

որդներն արդէն ննջում էին, նա հանդարտ վերկացաւ, առաւ իւր որսորդական զէնքերը և զաղտուկ գուրս եկաւ տանից: Սակայն նրա նախազգուշութիւնը չը հասաւ նպատակին: Հարևան որսորդի այցելութիւնն արդէն օրիորդների սրտում կասկած էր յարուցել: Նրանք սկսեցին հետևիլ հօրը և համոզուեցին, որ իրանց ենթադրութիւնը ճիշտ էր:

Սաստիկ վշտացած, մեծ քոյրն ասաց փոքրին՝

— Ամեն ինչ կորաւ: Հայրս մոռացաւ իւր խոստումը և իւր այս ճակատագրական թուլութեամբ, բոլորովին կը կորցնի իւր հոգին: Ի՞նչ անենք ուրեմն: Իմ կարծիքով, միայն մի բան է մնում մեզ. մեզնից մէկը պէտք է զոհի իւր անձը: Գիշերը մութն է և բարեպատեհ զիտաւորութիւնս իրագործելու համար: Ես կը փաթաթուիմ սպիտակ սաւանով և կերթամ նաւահանգիստը, այնտեղ, ուր կարծում եմ, որ արագիլները պէտք է լինին: Գու-

ցէ հայրս մթութեան մէջ ինձ արագիլի տեղ ընկունի և սպանի: Երբ նա իւր սխալը տեսնի, այնուհետև էլ անկարող կը լինի սպանելու անմեղ արարածներին: Իսկ դու, սիրելի քոյրիկ, աշխատիւր եռապատիկ գործովդ ու սիրով մոռացնել տալու նրան իւր կրած կորուստը:

Այսպէս էր խօսում անձնուէր օրիորդը և աղի արցունքը թափում էին նրա աչերից: Նա իւր կորուստը չէր ոգբում, այլ ցաւում էր հօր մասին, թէ ինչպէս պիտի վշտանայ նա երբ տեսնի, որ իւր աղջկայ մահուան պատճառն է եղել և այդ ահածայ յանցանքը երբէք չի ներիլ իրան: Բայց կրտսեր քոյրը չէր կամենում յետ մնալ անդրանիկ բրոջից:

— Ո՛չ, սիրելի քոյրիկս, ո՛չ, ասում էր նա, դու չը պէտք է մեռնես, հեկեկում էր նա աղերսագին: Հայրս արու գտակ չունի և դու, որպէս անդրանիկը, սլաւտաւոր ես մարդու գնալ և առիթ չը տալ մեր օջախի ճրագը մարելու: Իսկ

ինձ, որպէս կրտսերի, թոյլ տուր մեռնել հօրս փրկութեան համար:

Այսպէս երկար վիճում էին մեռնելու իրաւունքի համար և քոյրերից ոչ մինը չէր ուզում զիջանիլ միւսին: Վերջապէս անգրանիկը, տեսնելով որ խօսքով չի կարողանում համոզել քրոջը, առաւ սպիտակ սաւանը և գուրս ելաւ տանից: Բայց կրտսերն էլ անձնուիրութեամբ չէր կամենում քրոջից յետ մնալ: Փաթաթուած բոլորովին սպիտակ սաւանում, աննկատելի կերպով հետևեց նրան զէպի ծովեզրը և թագնուեց մօտիկ եղեգնուտի մէջ:

Մինչդեռ Սկազան թափառում էր ծովեզրի եղեգնուտների ու ճահիճների մէջ և սպասում իւր որսին, մին էլ յանկարծ նա նկատեց մի ինչ որ սպիտակ պատկեր, որ երևում էր թփերի մէջ: Առանց ժամանակ կորցնելու, նա նշանեց երևակայական սպիտակ թռչունին: Ալեզարդ փորձուած որսորդի նշանը կտրուկ էր և ուղղակի հասաւ նպատակին:

Սկազան խոցեց իւր հարազատ դրստեր սիրտը: Կրտսերը շտապեց սփնելու մեռնող քրոջը և Սկազան շատ զարմացաւ, որ երկրորդ արագիլը հրացանի ձայնից չը թռաւ, այլ մնում է իւր շնչասպառ ընկերոջը փարուած: Արագութեամբ լցրեց նա հրացանը և տեղն ու տեղը մահացրեց երկրորդ դստերը:

Այնուհետև երջանիկ որսորդը շտապեց իւր որսին՝ բայց ո՛հ սարսափ: Արագիլների փոխարէն նա տեսաւ իւր հարազատ՝ մեռանող գուլտարներին: Ռ՛վ կարող է նկարագրել թշուառ հօր յուսահատութիւնը:

Թոյլ, հագիւ լսելի ձայնով մեռանող օրիորդները աղերսում էին դժբաղդ հօրը ընդունելու իրանց մահը որպէս փրկանք աստուծու պատուիրանը չը կատարելու համար և երգուելու՝ այլ ևս երբէք չը զանց առնելու այն: Եւ երբ թշուառն երգմամբ խոստացաւ կատարել նրանց

կամբը, երկուսն էլ ուրախ ժպիտով հագին աւանդեցին:

Այն օրուանից Օկազան բոլորովին վերածնունեցաւ: Բայց աւանդ. անցածն արդէն անցել էր և անկարելի էր վերադարձնել: «Երբէք վայր ընկնող տերևը չի վերադառնում իւր ոստին»: «Ո՛չ մի ափսոսանք, ո՛չ մի զղջումն չի վերադարձնիլ անցեալը» *):

Օկազան տարաւ տխուր բեռը իւր յաւիտենական անտէրացած տունը: Մօտիկ անտառում նա խարոյկ շինեց և այրեց իւր երկու սիրասուն գուտորների գիակները, նրանց աճիւնը թաղեց դամբանի մէջ ու վրան երկու մահարձան կանգնեց: Իսկ ինքն ածիլեց գլուխը և դարձաւ միայնակեաց ձգնաւոր:

Ժողովրդական համբաւը չը մոռացաւ անձնուէր, ազնուասիրտ օրիորդներին և մինչև այսօր էլ փառաբանում է նրանց հերոսական անձնուիրութիւնն ու յիշատակը:

*) Եսպոնական առածներ:

III.

ՊԱՐՏՔԸ ՏԱԼՈՎ, ՄԵՂՔԸ ԼԱԼՈՎ

Պիոտո բաղաբի Տէրամակի փողոցում ապրում էին երկու հարևան, որոնց խանութները իրար մօտ էին: Մէկը շատ հարուստ վաճառական էր, բայց սաստիկ ժլատ, այն ժլատ հարուստներից մէկը, որոնց համար առածն ասում է, թէ նրանք «Յօժարութեամբ կը կերակրուէին գետի քարերով», եթէ այդպիսով կարողանային պահպանել իրենց կեանքը: Միւսը ձուկն էր ծախում և ամբողջ նահանգում գովուած էր իւր «լաւ ձուկը պատրաստելու» համար: Այդ էր պատճառը, որ նրա խանութը միշտ լիքն էր լինում գնողներով և վաղ առաւօտից սկսած մինչև ուշ գիշեր նա աղ էր զնում կտրտած ձուկը, շարում էր

բամբուռի շշերի վրայ կամ թաւայում տապակում էր ձուկը եւ եկած իւղի մէջ, վրան էլ ցանում իւր հնարած համեմունքը:

Հարուստ ժլատը սիրում էր ամեն բանից օգուտ քաղել:

—Մի՞թէ ես չը պէտք է օգտուեմ այդպիսի անուշ հարևանութեամբ, մտածում էր նա: Եւ որովհետև ժլատութիւնը հնարագէտ է լինում, ուստի մեր ժլատն էլ շուտով դրա հնարը գտաւ:

Ճաշի ժամանակ ժլատը վնայ հարևանի խանութը իւր բաժին բրինձը ձեռին, իբր թէ բարեկամական զրոյց անելու համար, նստեց ճայթճայթօղ թաւայի կողքին և երբ ուտում էր իւր եփած բրինձը, այդ միջոցին ազահութեամբ լափում էր նա և տապակած ձկան բուրմունքը: Ո՛հ, այդ ինչ հիանալի էր: Եւ ի՜նչ հրաշալի հնար էր գտել նա համեմելու իւր աղքատիկ ճաշը: Եւ երբ բրինձն արդէն կերուած էր և քաղցն սնցած,

արդեօք նոյնը չէր հարուստ ժլատի համար՝ նա ձուկն էր կերել թէ միայն նրա բուրմունքը վայելել, քանի որ այս բաւականութիւնը ձրի էր ստացել և ոչինչ չէր վճարել:

Այս խաղը նա կրկնում էր ամեն օր և փոքր առ փոքր տապակած ձկան բուրմունքը դարձաւ նրա համար կերակրի անհրաժեշտ համեմունք: Վերջապէս ձկնափաճառը գլխի ընկաւ:

—Ա՛յ լա՛ւ բան, մտածում էր նա: Հարեւանա կամենում է ճաշի համար ձրի համեմունք ունենալ: Այդ անկարելի է, մեզանում ձրի ոչինչ չեն տալիս:

Եւ նա կազմեց մի հաշիւ, թէ քանի ամիս և օրքան գումար արժէ հարևանի բիթը ամեն օր ձկնով կերակրելը:

Հաշիւը ձեռին նա մտաւ հարևանի խանութը և լուռ յանձնեց նրան: Նա ուրախ ժպտալով վերցրեց հաշիւը և սկսեց կարգալ: Ապա ժպտալով պատուիրեց կնոջը բերել դրամարկղը: Կինը կա-

տարեց հրամանը: Վաճառականը հանեց արկղից մի բուռը ոսկի ու արծաթէ դրամներ, ածեց սկուտղի վրայ ու սկսեց այնպէս թափահարել, որ փողերն սկսեցին զնգզնգալ: Մի քանի րոպէ այսպէս շարունակելով, նա հովհարը զիսկընց հաշուին, գլուխ խոնարհեց ու ասաց՝

—Է՛հ, կարծեմ այժմ իրար այլ ևս ոչինչ պարտ չենք:

—Ի՛նչպէս թէ պարտ չէք, գոռաց զարմացած ձկնավաճառը: Գուր հրաժարե՞մ էք վճարելուց:

—Ամենևին, պատասխանեց ժլատը, դուք վճար էիք պահանջում ձեր օձաձկան բուրմունքի համար և ես այդ վճարեցի ձեզ իմ փողերի զնգզնգոցով: «Պարտքը տալով, — մեղքը լալով» ասում է առածը: Այդպէս ուրեմն, սիրելի հարևանս, մեր հաշիւը վերջացած է:

* *
*

Մրանք վերջին խօսքերն էին, որով հարևաններն փոխանակեցին իրար իրանց կեանքում: Ձկնավաճառն հասկացաւ, որ ժլատը խորամանկութեամբ գերազանցեց իրան և մխիթարում էր միայն նրանով, որ նա այժմ զրկուած էր իւր սովորական համեմունքից. բայց բանից դուրս եկաւ, որ նա այդտեղ էլ սխալուել էր:

Արդէն միւս օրը հարևանի խանութից գալիս էր աղած ձկան սաստիկ հոտ: Երկրորդ և երրորդ օրը նոյնպէս:

—Ա՛յ բեզ տրաքոց, մտածեց ձկնավաճառը: Հարևանս ինչպէս երևում է, քսակի բերանը բաց է արել և այժմ ձուկն ուրիշից է առնում:

Բայց, դու ընթերցող, չը կարծես խնդրեմ, որ ժլատը սկսել էր շուայլել փողերը և ամեն օր թոյլ էր տալիս իրան թանգ ճաշ պատրաստել: Ո՛չ, նա առաջուան պէս բաւականանում էր բրնձէ փլաւով: Իսկ կասէք դուք ինձ, ապա ձկան հոտը ո՞րտեղից էր: Ահա թէ որտեղից:

Նա ուղղակի վերցրել էր փողոցում վայր ընկած կամբալա ձկան գլուխը և ճաշի ժամանակ դնում էր այն թաւայի վրայ: Բայց ումը յայտնի չէ, թէ ի՞նչ հիանալի է բուրում այգախիսի ձկան ոսկրը այրուելիս: Այգախիսի հոտից նոյն իսկ կատուներն էլ, որոնք այնքան սիրում են ձկան հոտը, գազրելով փախուստ են տալիս, որքան ոյժ ունին:

Բայց որովհետև մեր բարեկամը տընտես մարդ էր, ուստի և ձկան ոսկրը ծառայում էր նրան երկար ժամանակ: Բաւական էր միայն ամեն անգամ պահել այդ ոսկրը շիկացած թաւայի վրայ և ճաշն այնպէս էր համեմում, որ գրանից աւելի լաւն էլ չէր հարկաւոր դրան:



IV. ԱՆԱՌԻԿ ԱՄՐՈՑ.

Մի գեղեցիկ առաւօտ Իելօյի ծովածոցում պատահեցան իրար Բրանն ու Բաշինկան *):

Չուկը նկատելով խխունջին ակամայ նախանձեց՝

—Այ թէ իրաւ ո՞վ է լաւ ապրում այս աշխարհում, մտածեց նա: Մի հասարակ խխունջ, բայց ի՞նչ ամուր, ապահով բնակարան ունի: Կարծես ամբողջ լինի, չըջապատած ամուր պարիսպներով ու խրամատներով և վտանգի ժամանակ նոյն իսկ ստորերկրեայ կամուրջով:

*) Բրանն եապօնացւոց ամենաթանկագին ձուկն է: Առանց նրան ոչ մի հացկերոյթ գլուխ չի գալ:—Բաշինկան—խխունջը շատ էժան է գնահատուում: Նա հասարակ ժողովրդի կերակուրն է և տապալուում է իւր սեպհական խեցիքում:

Եւ սովորական բարեր տալուց յետոյ բրասը խօսեց՝

— Ինչո՞ւ այդպէս վաղ էք գարթել այսօր: Իրան ձեզ վրայ նայողն ահամայ նախանձում է ձեզ: Ո՛չ որ չի էլ կարող մերձենալ ձեզ: Բաւական է, որ փակուէք ձեր տան մէջ, իսկ այնուհետեւ ձեր շուրջը ինչ տեսակ փոթորիկներ կամենան, թող բարձրանան, ձեզ այդ փոյթ չէ, ձեզ չեն կարող վնասիլ:

Այս խօսքերը շատ շոյեցին խխունջի ինքնասիրութիւնն և նա անկեղծ համեստութեամբ ասաց՝

— Իրաւի, դուք շատ ողորմած էք դէպի ինձ: Ա՛յն, ինչ որ ձեզ հաճելի է իմ տունն անուանելու, իսկապէս մի հասարակ խրճիթ է: Սակայն ես բոլորովին գոհ եմ իմ վիճակից: Ի հարկ է, ես միայն մի թոյլ, խեղճ արարած եմ, բայց երբ ես փակում եմ դռները, ինձ բոլորովին ապահով եմ զգում: Ուղիղն ասած, ես սաստիկ խղճում եմ նրանց, որոնք

չունին իրանց սեպհական տունը և թափառում են աշխարհումս անպաշտպան, փախուստ տալով ամեն մի բռպէ սպառնող վտանգից: Ես իմ ապրուստս ոչ որի հետ չէի կամենալ փոխիլ:

Հազիւ թէ այս խօսքերն ասաց, որ թափանցիկ կասուտակ ալիքը մթնազնեց խօսակիցների գլխին. արագ սաւառնող ձկնորտական նաւակը ամպի պէս հասաւ և նրա հետ միասին թեթև ծփանքով տարածուեցաւ ուռկանը:

Բրասն արագութեամբ փախուստ տուեց երկիւղից, ցրուեցան բոլոր մանր ձկները, որոնք ախորժանօք լսում էին բազցը զրոյցը: Իսկ խխունջը փակուեցաւ իւր խեցիում և ամուր փակեց խուփը:

— Թո՞ղ այժմ բռնի ինձ, ո՛վ կարող է, ծաղրելով ասաց նա և մինչև անգամ նազ անելով ճամկոտուեցաւ իւր բնում: Իսկ խեղճ բրասին երեւի բռնեցին: Ի՛նչ արած, հա՛խն էր այդ պարծենկոտին: Այս անտուն ժողովուրդը ավստոսարու ար-

ժանի չէ: «Նստի՛ր տանդ և ազնիւ աշխատանքով կերակրի՛րքեզ», անձ իմ կանոնը:

Եւ նա նորից աչք ածեց, որ տեսնի, արդեօք լաւ է փակել խեցիի դռնակը թէ ոչ և ապա փուռեցաւ ու քնեց քաղցր, անուշ քնով:

Ապա նա դարձնեց, զգուշութեամբ բացեց դռնակը և ճեղքից նայեց: Բայց ո՛րքան մեծ եղաւ նրա դարմանքն ու վախը, երբ փոխանակ ծովի թարմացուցիչ ցօղի, նա զգաց իրան շրջապատած երկրի շոր օդով և տեսաւ իրան ամեն տեսակ ձկների զէզի մէջ՝ ուր լիքն էին կրաքներ, ոստեւներ, ծովային խխունջներ և ուրիշ խեցիներ: Այն, նա դրուած էր ձկնավաճառի դառակի վրայ և նրա տան ճակատին կպած էր թերթիկ, վրան նշանակած նրա շնչին զինը—խանութներում եղած ապրանքների գներից ամենաշնչինը:

Յաճախորդները շարունակ գնում գալիս էին, բայց բաշինկի վրայ ոչ ոք ուչք

չէր դարձնում: Ի վերջոյ, երկար խօսք ու զրուցից յետոյ, խխունջը գնեց հիւանի կինը, որը դրանից աւելի լաւ կերակուր գնելու միջոց չունէր: Քալով տուն, նա դրեց իւր գնածը թաւի մէջ, տապակեց նրան իւր սեպհական ջրում, իւր սեպհական սնակում և ապա անուշ արաւ մեծ ախորժակով:

Այգպէս ուրեմն անառիկ ամրոցը, որի մէջ խխունջն իրան այնքան ապահով էր զգում և որի միջից նա այնպէս արհամարհանքով էր նայում անտունների վրայ, առաջ ծառայում էր շքուոր մարդոց համար իբրև անօթ ու աման, յետոյ որպէս սնպէտք բան դուրս նետուեցաւ աղբակոյտը, ապա այրեցին, կիր ստացան, որը հարկաւոր եղաւ մի նոր տուն սուաղելու համար, որ կառուցել էր մի հարուստ վաճառական:

Ո՛վ գիտէ, արդեօք խխունջի ոզին չը բնակուեցա՞ւ նոյնպէս այդ նոր տանտիրոջ սրտում:

V. ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՆԱԻՐ:

Ամեն ժողովուրդ նոր-Տարուայ գալուստը մի առանձին, շքեղ հանդիսով է տօնում: Ամենքն ուրախ են նոր-Տարուն — ամենքը նրանից կարծես թէ մի լաբան են սպասում:

Մանաւանդ խնդութեամբ են հանդիպում նոր-Տարուն Դայի-Նիպոստում, Արևծագի օրհնաբանեալ երկրում: Չէ՞ որ նոր-Տարու գիշերը, ինչպէս ամենքին յայտնի է, Եապօնիայի ավերին մօտենում է Տակարա-Բունէ կախարդական նաւը, որը ղեկավարում են երջանկութեան եօթն աստուածները, օժտուած եօթը հրաշալիքներով և այն բոլոր թան-

*) Այդպէս են անուանում Եապօնացիք իրանց երկիրը:

կագին իրերով, որոնց այնքան ծարաւի են մարդկային սրտերը:

Այդ հրաշալիքները բերել է մի ժամանակ Մօմօ-Տարօն Սատանի կզգուց, որը գտնոււմ է հեռու, շատ հեռու, անսահման ովկիանոսի մէջ և սւր բնակոււմ են Օնիի նենգաւոր ու խարդախ ոգիները եզան պոզերով, ծուռը զլխով, սուր ժանիքներով, զգուելի բերանով և ձեռքի ու ոտքի վրայ ունեցած առիւծի շանգերով:

Դեռ ևս շատ հին ժամանակներում այդ ոգիները խուժեցին Արևծագի երկիրը և յափշտակեցին շատ մարդիկ, որոնց ողջ-ողջ լափում էին: Կողքի մէջ տեղը գտնոււմ էր այլանդակ հսկայ՝ իշխան Օնիի անառիկ ամրոցը: Այստեղ թագնոււմ էին զանազան հրաշալիքներ՝ յարդեայ անտեսանելի զլխարկը և յարդեայ վերարկուն, որը նոյնպիսի յատկութիւններ ունէր: Փիրուզի երկու փայլուն գնդեր, որոնք կառավարում են

մագրն թացութիւնն ու տեղատու թիւեր
 և վերջապէս եօթը թանկագին զանձ՝ որ
 անուանուամ են շիպպօ՝ բիւրեղակը՝—
 ոսկու և արծաթի թանկագին մետաղնե-
 րով, սաթը, սագափը, զմրուխտը, արե-
 ւակն, վարդագոյն մարջանները և թան-
 կագին մարգարիտներ:

Այն անձն, որն որ գտաւ այլ զան-
 ձերը՝—Մօմօ-Տարօն, երջանկութեան սի-
 րելի գաւակն էր, այն մարդկանցից մէ-
 կը, որոնց ամեն բան յաջողուամ է և
 որոնք ամեն տեղ ընդունուած են: Նոյն
 իսկ նրա ծնունդը հրաշալի էր: Ահա թէ
 ինչ են պատմում նրա մասին բարի
 մարդիկ:

Մեզնից շատ առաջ, թէ երբ, ճիշտը
 գժուար է ասել, ապրում էր մի ծերունի
 փայտահատ իւր պառաւ կնոջ հետ:
 Գրանք իրար հետ շատ սիրով էին ապ-
 րում, բայց իրանց գժբաղտ ու անտէր
 էին համարում, որ գաւակ չունէին:

Մի անգամ երբ մարդն անտառումն

էր, կինը գնաց գետը լուացք անելու:
 Յանկարծ նա ջրի երեսին մի մեծ դեղձ
 տեսաւ, երկու տերև վրան, որին հո-
 սանքը նրա մօտ էր քշում: Իսկոյն նա
 բռնեց պտուղը և խնամքով դրեց այն
 կողովում, որ դրանով հիւրասիրի իւր
 մարդուն: Իրիկնահացից յետոյ երբ նա
 առաւ դանակը և սկսեց երկու հաւասար
 կէս անել դեղձը, տեսաւ որ կորիզի փո-
 խարէն ժպտում է մի պտալիկ, սիրունիկ
 մանկիկ: Կարող էր երևակայել ալևորների
 բերկրութիւնը: Նրանք պտալիկի անունը
 դրին Մօմօ-Տարօ, որ նշանակում է
 «Գեղձի-մանուկ», և սկսեցին փայ-
 փայել նրան, որպէս վայել էր ամենա-
 գորովալի ծնոցներին:

Եւ նրանց խնամքն ի գուր չը շոայուե-
 ցաւ: Ո՛րքան էլ պտալիկ էր Մօմօ—
 Տարօն, բայց և այնպէս իւր հասակից
 վեր անսովոր ոյժ ունէր և ով օրերով է
 մեծանում, նա ժամերով էր մեծանում և
 մինչգեւ դրա հասակի մանուկները հա-

զիւ նստել են կարողանում, նա արդէն ամուր օտի էր ելել և մօրը մեծ ամանով ջուր էր տալիս, այն ամանով, որը մայրն էլ հաղիւ էր կարողանում բարձրացնել: Իսկ երբ ծերունին վերադառնում էր անտառից բեռան տակին տընքալիս, մանուկն իսկոյն առաջ էր գնում, առնում էր նրա ձեռքից կացինն ու ցախի կապոցը և տանում խրճիթն այնպիսի արագութեամբ, կարծես թէ սրանք մանկական խաղալիքներ լինէին: Եւ ինչով որ կարող էր, նա օգնում էր ծնողներին և նրանց փոխարէն կատարում նրանց ծանր աշխատանքը: Այդպէս մեծացաւ նա, ի մեծ բերկրութիւն իւր ծնողների, որպէս մի վայելչակազմ, յաղթանդամ ու շնորհալի պատանի: Մարմնամարզական մրցութիւնների ու խաղերի մէջ մրցակիցը չունէր, ո՛չ ոքից չէր վախենում, ո՛չ մարդկանցից, ո՛չ էլ շար ոգիներից: Մի և նոյն ժամանակ նա բարի էր և գթասիրտ, չէր վիրաւորում

ամենաչնչին արարածներին անգամ: Այդ պատճառով էլ ամենքը նրան սիրում էին, և նոյն իսկ կենդանիներն անգամ նրանից չէին վախենում, այլ սիրով հնազանդում էին նրան: Այս բանն հէնց շատ հարկաւոր եղաւ նրան ապագայում, ինչպէս որ այժմ կը տեսնենք:

Մօմօ-Տարօն շատ անգամ էր լսել հէքիաթներ Սատանի կղզու վրա բնակուող Օնիի-ոգիների և այնտեղ թագնուած հրաշալի գանձի մասին: Այս հէքիաթները վառեցին նրա եռանդն ու արիութիւնը և նա մտքումը զրեց անպատճառ տիրանալ այդ գանձին և այդպիսով փոխարինել ծնողների բոլոր ինամքն ու հոգացողութիւնը:

Բարի ծերունիներն, ի հարկ է, չէին ուզում լսել անգամ այդ մասին:

— Ի՛նչ հարկաւոր է մեզ հարստութիւնը, ասում էին նրանք: Մենք երջանիկ ենք նրանով, որ քեզ պէս զաւակ

ունինք և ոչ մի բան չի փոխարինիլ քո մեզնից անշատուելու թախիծը:

Սակայն Մօմօ-Տարօն այնպէս եռանդազին աղերսում էր նրանց թոյլ տալու ճանապարհորդել, որ քարեսիրտ ծերունիները վերջապէս համաձայնեցին թոյլ տալու: Մայրը ճանապարհի համար բրնձի գաթաներ պատրաստեց, դարսեց բամբուկի կողովում և Մօմօ-Տարօն պանդրխտութեան գաւազանը ձեռն արած, ճանապարհ բնկաւ:

Գեռ չէր հեռացել նա գիւղից, որ նրան մօտեցաւ մի անծանօթ շուն և ուրախ ուրախ պոչը խաղացնելով, ասաց՝

—Ինձ էլ հետդ տանես, Մօմօ-Տարօ: Ես հաւատարմութեամբ կը ծառայեմ քեզ և հաւանական է, որ պէտք կը դամ քեզ պանդխտութեանդ ժամանակ: Միայն թէ դեռ մի քո համեզ գաթաներիդ համը տեսնեմ:

—Ամենայն սիրով, ասաց Մօմօ-Տարօն և իսկոյն կատարեց նրա խնդիրը: Զունն

ախորժակով կերաւ գաթաները և ուրախ ուրախ թուչկոտալով հեռեց Մօմօ-Տարօյին:

Մի փոքր անցնելով հանդիպեց նրանց կապիկը: Նա էլ գաթաներ խնդրեց և փոխարէնն առաջարկեց իւր ծառայութիւնը:

Մօմօ-Տարօն հիւրասիրեց նա և կապիկին: Ապա շուտով միացաւ նրանց բաղէն և նոյն պայմանով խոստացաւ իւր օգնութիւնը շար Օնիի հետ կուուելիս:

Վերջապէս Մօմօ-Տարօն իւր աւագանիով հասաւ ծովափը: Այնտեղ չէր երևում ոչ մի մակոյկ և միայն երկար որոնելուց յետոյ, Մօմօ-Տարօն նկատեց հեռում սիւնից կապած մի մակոյկ, բայց ինչպէս հասնէր մակոյկին: Եւ կապիկն իսկոյն դրա հնարն էլ գտաւ:

—Գու հօ լողալ գիտես, ասաց նա շանը, ահա՛ դու ընկիր ջուրը, իսկ ես կը նստեմ մէջքիդ և երկուսով կը քաշ տանք մակոյկը:

Ասելն ու անելը մէկ եղաւ: Զունը

կապիկն առնելով մէջքը, հասաւ ամբար: Այստեղ կապիկը յետ արաւ մակոյկը, պարանը տուեց շան բերանը և սա ուրախ ուրախ բաշ տուեց մակոյկը դէպի ամբար: Ապա Մօմօ-Տարօն, շունն ու կապիկը նստեցին մակոյկը, իսկ բազէն սուաջ թռաւ տեղեկութիւններ հաւարելու:

Հասնելով Սատանի կղզուն և բազէի խորհրդով մակոյկը մի ապահով տեղ թաղցնելով, Մօմօ-Տարօն իսկոյն ուղևորուեցաւ դէպի ամբար, որը բնակուած էր հսկայ—Օնին: Իւր երկաթէ գաւազանով Մօմօ-Տարօն խորտակեց դռները և բարձրաձիշ աղաղակելով, որին ձայնակցում էին շան հաչոցը, կապիկի սոնալը և բազէի սուլոցը, ներս խուժեց ամբարի ներքին դահլիճները: Այս խլացնող ձայներից սարսափած՝ Օնի ուղիները ցիր ու ցան եղան: Նոյն իսկ հսկայ—Օնին բրնձէ գինուց արբած, գարթնեց և կատաղաբար վեր թռաւ տեղից: Մօմօ-Տարօյին տեսնելով, նա դայրացած գո-

ռաց և բացեց իւր ահուելի բերանը, որ լափէր խիզախ պատանուն, բայց այդ այնքան էլ հեշտ չէր: Իսկոյն յետևից շունը յարձակուեցաւ և ժանիքները ցցեց նրա ազդրի մէջ, կապիկը ցատկեց նրա ուսերին և ձեռքով աչքերը ծածկեց. բազէն էլ ուզգակի թռաւ երեսին և բոլորովին խլացրեց նրան թևերի թափահարելով:

Մօմօ-Տարօն նոյնպէս քնած չէր և այնպէս էր աշխատում իւր գաւազանով, որ հրէշը ցաւից, կսկծից ծունկ չուզեց նրա առաջ և սկսեց աղերսել խնայել նրա կեանքը, խոստանալով յանձնել նրան իւր բոլոր գանձերը:

Մինչ այս, մինչ այդ ցիր ու ցան եղած ուղիները լսելով իրանց տիրոջ ձիշ ու աղաղակը, կամենում էին օգնութեան գալ, բայց բազէն նախազգալով այդ կանգնել էր դռան շէմքին և ամեն ներս մտնողին կոտորահարելով, աչքը հանում էր և այսպիսով կուրացած Օնիի-ուղիներն էլ ստիպուած էին հնազանդուիլ: Ապա

իրանց իշխանի հրամանով նրանք ստիպուած եղան բերել իրանց գանձերը և տեղաւորել այն մեծ նաւի վրա, որով յաղթական Մօմօ-Տարօն իւր հաւատարիմ բարեկամների հետ միասին պէտք է տուն վերադառնար:

Այն ինչ խեղճ պիտորները տխրութեամբ անց էին կացնում իրանց օրերը, սպասելով իրենց սիրելիին և անդադար յանդիմանում էին իրար, որ զիջան նրա աղերսանքին ու թոյլ տուն այդ վտանգաւոր ճանապարհորդութիւնը ձեռնարկելու: Նրանք իրանց օրերը գրեթէ անց էին կացնում ծովափին, ուր մինչև անգամ շինել էին իրանց համար բամբուկէ խրճիթ, որ հնար ունենան աւելի շուտ տեղեկանալու կորած որդու մասին:

Բայց ահա մի անգամ, երբ նրանք ըստ սովորականին նստած էին ծովափին և աչքը ջուր կտրած հեռուն էին նայում, հորիզոնում երևեցաւ մի հրաշալի նաւ և երբ նա մօտեցաւ ափը, պիտոր-

ները ի մեծ, աննկարապրելի բերկրանս իրանց, տախտակամածի վրայ տեսան, աւտոզ, գուարթ և անվնաս Մօմօ-Տարօյին, որը յաղթական կերպով մատնանիչ էր անում բերած անթիւ գանձերի վրայ:

Սակայն ծերունիներին քիչ էր զրաւում այդ: Նաւի վրայ գտնուող գանձերից նրանց համար ամենաթանկագինը իրենց սիրելի գաւակ, ինքը պատանի Մօմօ-Տարօն էր, որին կրկին տեսնելու յոյսն արդէն կորցրել էին ծնողները:

Այսպիսով Մօմօ-Տարօն կատարեց իւր վաղեմի նուիրական փափագը՝ տեսնել իւր ծնողներին ուրախ, հարուստ ու բաղդաւոր: Նա չր մոռացաւ և առատ պարգևատրեց իւր հաւատարիմ բարեկամներին՝ շանը, կապիկին ու բաղէին, հարստացրեց հարևաններին, իսկ ինքն էլ մի փոքր ժամանակից՝ պսակուեցաւ մի գեղեցիկ իշխանուհու հետ:

Եւ անա այն եօթը թանկագին գան-
 ձերը, որոնց Մօմօ Տարօն ուրիշ հարրս-
 տութիւնների հետ միասին զուրս բերեց
 Սատանու կողուց, կազմում են այն թան-
 կագին գանձի մի մասը, որով ամեն Հին
 Տարուայ վերջին գիշերը հասնում է Եա-
 պօնիայի ամերին բեռնաւորուած կա-
 խարդական նաւը: Այս նաւից իջնում են
 երջանկութեան եօթն աստուածները՝—
 իրանց շնորհալի պարզկներով, որոնք են՝
 «Երկար կեանք», «Հալալ բրտին-
 քով վաստակած ապրուստ», «Իւր
 վիճակից գոհ մնալը», «Պատկա-
 ոելի հասակի փորձառութիւնն ու
 գիտութիւնը», և որ նրանք բաշխում
 են մահկանացուներիս ամէն մէկին իւր
 պանկացածի համեմատ:

Եւ անա թէ ի՞նչու այդպիսի բերկ-
 րալիք յոյսերով են հանդիպում Նոր-Տա-
 րուն Արեւադի օրհնարանների փրկի բնա-
 կիշները:





« Ազգային գրադարան



NL0376709

74.382

